ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

**6 մայիսի 2011թ.** **N_-Ա**

**ՈՐՈՇՈՒՄ**

**«ԵՎՐՈՍԻԹԻՍ» ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ կետով՝

**Երևան քաղաքի ավագանին *որոշում է.***

1. Համաձայնություն տալ անդամակցելու «ԵՎՐՈՍԻԹԻՍ» ասոցիացիային:

2. Երևան համայնքի բյուջեում նախատեսել «ԵՎՐՈՍԻԹԻՍ» ասոցիացիային անդամության վճար:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ** **Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԵՎՐՈՍԻԹԻՍ» ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ԵՎՐՈՍԻԹԻՍ» ասոցիացիան եվրոպական գլխավոր քաղաքների ցանցն է: Ստեղծվելով 1986թ.՝ այն միավորում է ժողովրդավարական ճանապարհով ընտրված ինքնակառավարման մարմինների 140 քաղաքներ. Եվրամիության անդամ երկրների քաղաքներն ունեն լիիրավ անդամի կարգավիճակ, իսկ եվրոպական մյուս երկրների քաղաքներն ունեն ասոցացված անդամի կարգավիճակ: Այն շահույթ չհետապնդող կազմակերպություն է, նստավայրը գտնվում է Բրյուսելում: Ասոցիացիան ղեկավարվում է Գործադիր կոմիտեի կողմից: Գործադիր կոմիտեի անդամներն առաջադրվում են ամենամյա գլխավոր ասամբլեայի կողմից՝ 3 տարի ժամկետով: Գործադիր կոմիտեն ղեկավարում է նախագահը, որն ընտրվում է ամենամյա գլխավոր ասամբլեայի կողմից՝ 1 տարի ժամկետով: Ասոցացված անդամն ունի լիիրավ անդամին տրվող բոլոր լիազորությունները՝ բացառությամբ այն հանգամանքի, որ իրավասու չէ թեկնածու առաջադրել գործադիր կոմիտեի ընտրություններին:

Երևանի անդամակցությունը «ԵՎՐՈՍԻԹԻՍ» ասոցիացիային հնարավորություն կտա խթանել համագործակցությունը անդամ քաղաքների միջև տնտեսական, տեխնոլոգիական, սոցիալական և մշակութային զարգացման մակարդակներում, որը մեծապես կնպաստի Երևան քաղաքի համալիր զարգացման հեռանկարային ծրագրերին:

Ուստի անհրաժեշտություն է առաջացել կայացնել որոշում «ԵՎՐՈՍԻԹԻՍ» ասոցիացիային Երևանի անդամակցելու վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ** **Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՎՐՈՍԻԹԻՍ» ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԵՎՐՈՍԻԹԻՍ» ասոցիացիային անդամակցելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման և ասոցիացիային անդամակցելու դեպքում կառաջանա Երևան քաղաքի ավագանու կողմից համապատասխան որոշման ընդունման անհրաժեշտություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՎՐՈՍԻԹԻՍ» ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«ԵՎՐՈՍԻԹԻՍ» ասոցիացիային Երևանի անդամակցելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ և ասոցիացիային անդամակցելու դեպքում անհրաժեշտ կլինի յուրաքանչյուր տարվա Երևան քաղաքի բյուջեում նախատեսել ֆինանսական միջոցներ, որը ներառում է պարտադիր անդամավճար՝ 4260 եվրոյի չափով, ինչպես նաև սեմինարներին և ֆորումներին մասնակցության համար՝ գործուղման ծախսեր:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ